ΜΝΗΜΗ ΣΦΑΓΗΣ ΤΩΝ ΑΡΜΕΝΙΩΝ
Ἡ ΜΙΚΡΗ ΑΡΜΕΝΙΚΗ ΠΑΡΟΙΚΙΑ ΤΗΣ ΝΑΞΟΥ·
(1624—1821)

ΤΟΥ ΝΙΚΟΥ ΚΕΦΑΛΛΙΝΙΑΔΗ

«ΝΑΞΙΑΚΟ ΜΕΛΑΟΝ», ΦΙΛΟΛΟΓΙΚΗ ΕΚΔΟΣΗ, ΑΘΗΝΑ, ΟΚΤΩΒΡΙΟΣ 1987, ΑΡΙΘΜ. ΦΥΛΛΟΥ 527 (34).

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ
«ՆԱՔՍՈՍ [ԿՂԶՈՒ] ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈՔՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԸ» (1624—1821 ԹԹ.)

ՆԻԿՈՍ ԿԵՖԱԼԼԻՆԻԱԴԻՍ

«ՆԱՔՍԻԱԿՈ ՄԵԼԼՈՆ» (ՆԱՔՍԻԱԿԱՆ ԱՊԱԳԱ») ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, ԱԹԵՆՔ, 1987, ՀՈԿՏԵՄԲԵՐ, թիվ 527 (34):

Հունաստանի մայր ցամաքում և հունական կղզիներում հայության առկայության մասին, դեռևս միջնադարում, կան բազմաթիվ վկայություններ և՛ պատմական երկերում, և՛ արխիվային փաստաթղթերում։ Բայց էգեական ծովի Նաքսոս կղզու հայության վերաբերյալ և ոչ մի տեղեկություն հայտնի չէր։ Նաքսոսը գտնվում է էգեական ծովի հարավում և խոշորագույնն է Կիկլադյան կոչվող կղզիների խմբում։ Կղզին պատմական առումով հայտնի է դեռևս մ. թ. ա. II հազարամյակի վերջից։ Կոստանդնուպոլսի՝ լատինների կողմից գրավվելուց հետո (1204 թ.) այն անցավ Վենետիկի հանրապետության գերիշխանության ներքո, կազմելով Նաքսոսի գրաֆությունը, որը գոյատևեց մինչև 1566 թ.։ Այնուհետև նրան տիրեցին օսմանցիները։ 1770 թ. չորս տարով կղզին անցավ ռուսների ձեռքը (այն գրավեց Օլովը)։

Դեռևս 1932 թ. հույն պատմաբան Գ. Վարգիսը «Նաքսոսի—Պարոսի ձայն» պարբերականում «Նաքսոս [կղզու] հայկական փոքրիկ համայնքը» վերնագրով մի հոդված էր հրատարակել, որ լույս տեսած լինելով շատ անմատչելի մի հրատարակությունում, աննկատ էր մնացել։ Ահա դարաբաղյան դեպքերի ազդեցության տակ հետազոտող Նիկոս Կեֆալլինիադիսը տեղին համարեց այն վերահրատարակել իր խմբագրությամբ լույս տեսնող թերթում։

Ստորև թարգմանաբար բերում ենք հոդվածն ամբողջությամբ, որ մեր համոզմամբ պիտի հետաքրքրի հայ գաղթավայրերի պատմությամբ զբաղվող մասնագետներին։

Հ. Մ. ԲԱՐԹԻՆՅԱՆ

«Հայոց՝ իրենց ազգային անկախության համար մղվող պայքարի առթիվ,—գրում է Ն. Կեֆալլինիադիսը,—«Նաքսիական»-ում հրատարակում ենք տեղեկություններ Նաքսոսի հայկական փոքրիկ համայնքի մասին՝ XVII—XIX դդ։ Ամենակարևոր տեղեկությունները գտնում ենք Նաքսոսի պատմության արժանահիշատակ ուսումնասիրող Գ. Վարգիսի «Նաքսոսի-Պարոսի ձայն» պարբերականում (1932 թ. սեպտեմբեր, թիվ 332), որտեղ կարդում ենք.

«ՆԱՔՍՈՍ [ԿՂԶՈՒ] ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈՔՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԸ

Մեզ չհաջողվեց պարզել, երբ են հայերը հաստատվել Նաքսոսում։ 1624 թ. Նաքսոսում ապրում էին երեսունութ հայ՝ Բուրդոսի ս. Պարասկևի եկեղեցու մերձակայքում։ Սրանցից ինն արհեստավորներ էին՝ մեկը՝ ոսկեթելով կարող, երկուսը՝ պղնձագործ, մեկը՝ ոսկերիչ, մեկը՝ կոշկակար, մեկը՝ քարակոփ, մեկը՝ խոհարար, մեկը՝ հացթուխ և մեկը՝ ատաղձագործ։ Մնացածները

1 1987 թ. հոկտեմբերի համարը հավանաբար լույս տեսավ 1988 թ. փետրվարից հետո։

կանայք և երեխաներ էին, ոմանք՝ առանց մասնագիտության ծերունիներ։ Այս հայերը բարի և աշխատասեր մարդիկ էին և երբեք առիթ չեն տվել միջադեպերի և անկարգությունների, ինչպես բազմիցս և աննշան առիթներով՝ հրեաները։ Բոլորը հավաքված էին քաղաքի վերին մասում և շատ էին միմյանց օգնում ու պաշտպանում։ Արհեստավորներից երկուսը և մեկ ծերունի, ատամոսերգուներ էին իրենց՝ ս. Գրիգոր հայկական փոքրիկ եկեղեցում, որ այժմ գոյություն չունի։

Այն ժամանակաշրջանում հայոց հոգևոր ականն էր վանահայր Օհան Սեմիջյանը (Սեմերջյան—Հ. Բ.), առաքինի և լրագետ կղերական։ Նաքսոսի հայերը թծախնդիր էին նաև իրենց ներքին կարգուկանոնի հանդեպ, ունեին կազմակերպված համայնք, որի գանձարանում մուծումներ էին անում բոլոր աշխատողները։ Նրանք բավականաչափ տնտեսած գումարներ ունեին և մեծ հոգատարություն էին ցուցաբերում իրենց փոքրիկ եկեղեցու և վանահոր նկատմամբ։ Հայերը ձգտում էին սեփականություն ձեռք բերել։ Խնայողությունը նրանց հիմնական հատկանիշն էր, և եռանդուն ձգտում էին աշխատանքի ասպարեզ ստեղծել, որը հնարավորություն կտար և ուրիշ հայերի հաստատմանը նպաստում։

Ուղղափառների (իմա՝ հունադավանների—Հ. Բ.) և կաթոլիկների հետ հայերը շատ համեստաշխ էին ապրում, հայոց նշանավոր տոներին ուղղափառ և կաթոլիկ անձինք գնում էին նրանց փոքրիկ եկեղեցին, մի բան, որ շատ էր ուրախացնում հայերին, որոնք եկեղեցական արարողությունից հետո նրանց տուն էին հրավիրում և մեծապես պատվում։

Հայերի և բաղարի մնացած ազգային տարրերի միջև տիրում էր համեստաշխությունն ու բարյացակամությունը, մինչև որ մի ամպ խաթարեց խաղաղությունը... 1636 թ. մայիսին վախճանվեց հայ վանահայրը։ Նրան տարան իրենց փոքրիկ եկեղեցին և դիմեցին ուղղափառ մետրոպոլիտին, խնդրելով հոգևորականներ ուղարկել ս. Գրիգոր եկեղեցի, որ կարգան իր եկեղեցու աղոթքները։ Մետրոպոլիտ Բենիամինը հայոց հետ վարած երկար խոսակցություններից հետո որոշեց, որ ուղղափառ հոգևորականները սոսկ ներկա լինեն։ Հայերը դա վիրավորական համարելով, խորհրդակցության նստեցին և բնելով հարցը, վճռեցին հրավիրել կաթոլիկ հոգևորականի։ Այդ հարցով նրանք դնացին արքեպիսկոպոս Ռափայել Սկիատինիի մոտ և խնդրեցին, որ ուղարկվի վիկարիոսը։ Սկիատինին մերժեց և հայերը վերադարձան ձեռնունայն։ Նրանք խնդրեցին Բուրգոսի մեծամեծների միջնորդությունը, որոնք, ընդառաջելով հայոց խնդրանքին, գնացին Բենիամինի մոտ, որը սակայն, այդ ընթացքում տեղեկանալով, որ հայերը գնացել էին կաթոլիկների արքեպիսկոպոսությունը, զայրացած մերժեց թույլ տալ իր հոգևորականներին թաղման պաշտոնին ներկա լինելն անգամ։

Ահա, այսպիսով, թաղման արարողությունը կատարվեց միայն հայ սաղմոսերգուների կողմից, հավաքվեց հոծ բազմություն, և վախճանված հայ վանահոր թաղումը տեղի ունեցավ համայն ժողովրդի մասնակցությամբ։ Նրան թաղեցին ծովափին մոտիկ, ս. Կարապետի տաճարի բակում։

Այս միջադեպը՝ եկեղեցական աղոթքների մատուցման մերժումը այլադավան կղերականին, դատապարտվեց և վերադրվեց մետրոպոլիտ Բենիամինի համառությանը։ Հայերը վիրավորանքը ծանր տանելով, այսուհետև դադարեցրին ամեն մի հարաբերություն բարձրաստիճան հոգևորականների հետ, անգամ ս. Զատկի առթիվ կատարվող իրենց ձևական այցելությունները։

Այս դեպքից հարյուր տարի անց, այսինքն XVIII դ. կեսերին, հայոց այն ժամանակվա վանահայր Երեմյանն իր այցելությամբ վերականգնեց հարաբերությունները ուղղափառ մետրոպոլիտ Անթիմոսի և կաթոլիկների արքեպիսկոպոս Պետրո դի Ստեֆանիի հետ։ Այն ժամանակ Նաքսոսում կային շուրջ 25 հայ, իսկ Երեմյանը նրանց համայնքի վերջին տեր հայրը եղավ։ 1770 թ. ռուս-թուրքական պատերազմից հետո ընդամենը յոթ հայ էր մնացել։ Սրանցից երկուսը վախճանվեցին Նաքսոսում, մնացածները՝ արտագաղթեցին։

Գ. Վարդիսը «Նաքսիական դիվան» պարբերականում (հտ. 14, 1948, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 183 և հտ.) «Նաքսոսը ամաբեկված... ուրվականների կողմից» խորագրով մի այլ հոդված հրատարակեց, որտեղ գրում է.

«ՖԱԳԱԴԵՆԱՅԻ ԿԱՄ ՀԱՅՈՒՀՈՒ ՈՒՐՎԱԿԱՆԸ

Այս կախարդված տունը գտնվում էր Մուդայի մոտի նեղ փողոցներից մեկում, իսկ ուրվականը սարսափազդու դեմքով մի պառավ էր, որ, ինչպես ասում էին, անցորդներին հաճախ էր հայտնվում գիշերները։ Նա նշանավոր Ֆագադենան էր կամ Հայուհին, որը հռչակավոր վհուկ էր, բայց միաժամանակ և բուժող բժշկուհի։

Նա Ֆագադենա (լափող—Հ. Բ.) կոչվեց, որովհետև դեղաբույսեր հավաքող իր ամուսնու հետ ունեցած մի վեճի ժամանակ նրա ականջը կտրեց, որը, ասում էին, թե նույնիսկ կերավ։ Ստացած վերքից մի քանի օր անց ամուսինը մահացավ։

Ֆագադենայի գործերը շատ էին ու բազմազան։ Նա աղջիկների բախտն էր բացում, պակներ կապում, միացնում ու բաժանում ամուսինների, ամուսնացնում էր, ապաքան գուշակում։ Նա բոլորի անցյալը գիտեր, բայց և բժշկուհի էր։ Ոգեկոչումներով բուժում էր բարձր ջերմությունը, լեղին, նիխտուրան[2], արևահարությունը, վերքերը և շատ այլ բաներ։ Նա կղզու մայրաքաղաքում և գյուղերում վաստակում էր բավականաչափ զուտուշներ, հատկապես կանանցից։ Նա այցելուներին ընդունում էր մի նկուղում՝ եռոտանու վրա նստած, զանազան խոտերից առաջացած խիտ ծխի ու ծանր հոտերի ազդեցությամբ անհասկանալի բառեր էր արտասանում՝ նայած յուրաքանչյուր դեպքի, տալիս էր զանազան դեղաբույսեր և խորհուրդներ։

Իր մեծաթիվ հաճախորդների պատճառով (նրան ամեն տեսակ հարցերով շատ էին դիմում) բավական հարստություն կուտակեց, բայց և իր դեմ կղերականներին գրգռեց և նրանց կողմից հալածվեց։ Այսպես՝ մի օր քահանաներից մեկը՝ Ֆագադենայի մի հաջողությունից գազազած, մտավ նկուղը, նրան բրածեծ արեց ու ջարդեց-փշրեց նրա գիտության բոլոր զործիքները։ Սակայն Բուրգոսի աղջիկները բողոքեցին «պետքական կնոջը» հալածանքների ենթարկելու դեմ, որը ամուսնացնում էր աղջիկներին և բուժում այնքան մարդկանց, ինչպես ասում էին։ Վերջիվերջո, ժամանակը եկավ, որ այդ կինը բուժի... ինքն իրեն։

Մի առավոտ Ֆագադենան գնաց դաշտերը՝ դեղաբույսեր հավաքելու։ Իր չար բախտից մի թաքնված թշնամի դարան էր մտել։ Նրան խայթեց թունավոր օձը։ Ֆագադենան ուռեց և հակառակ իր արհեստի զործադրած բոլոր միջոցներին, մեռավ։

Ահա այն ժամանակվանից երևում էր նրա ուրվականը, բնակչությունը սարսափահար էր եղել, քանի որ նա հենց այնպես չէր երևում, այլ, ինչպես ասում էին, թակում էր տների գուռն ու լուսամուտը։

Այս պատմությունը բազում տարիներ տևեց, մինչև որ մի կոստանդնուպոլսեցի ծովային երեք գամով գամեց, ինչպես ասում էին, ուրվականը և այն այլևս չերևաց»։

Իր այլ հոդվածներում Գ. Վարդիսը մեզ հաղորդում է կղզու հայերի մասին ցաքուցրիվ այլ տեղեկություններ ևս։ Նա 1754 թ. մարդահամարի տվյալներն է մեջբերում, համաձայն որի, կղզում կային 4016 ուղղափառ, որոնցից 34-ը՝ կղերական, 324 կաթոլիկ (14 կղերական), 22 հայ (մեկ կղերական), 283 հրեա (3 կղերական), 16 թուրք։ Այն ժամանակ կղզու բնակչության ընդհանուր թիվը հասնում էր 4661-ի։ Հայոց քահանան էր Կարապետ Երեմյանը։ «Հայերը,—գրում է նա,—ամփոփ բնակվում էին ս. Հովհաննեսի մոտ և զբաղվում էին ոսկերչությամբ, լումայափոխությամբ ու դերձակությամբ, և պարտավոր էին գրանցվել իրենց քահանայի կողմից»։

---

2 Գրական՝ նիկտուրիա, միզաթափություն։

«Ամրոցի քաղաքում,— գրում է Վարդիսը մի այլ տեղում,— 1758 թ. բնակվում էին 3000 ուղղափառ, 500 կաթոլիկ և 25 հայ»։

Նկարագրելով 1821 թ. հույների ապստամբությունը (թուրքական տիրապետության դեմ— Հ. Բ.) Նաքսոսում, Հոլանդիայի հյուպատոս Ֆրանց Սամմարիտաար իր օրագրում նշում է. «Նաքսոսի բնակիչները շրջեցին քաղաքով մեկ, երգելով հունական երգեր, նրանք ուրախությունից շարունակ կեցցե էին գոչում և հրացան արձակում, մինչև հասան հունական մայր տաճար։ Նախքան հասնելը, մի կաթոլիկ հայ սարաֆ (լումայափոխ), որ բոլորի հետ ցուցարարների թվում էր, սպանվեց ատրճանակի կրակոցից։ Ասվում է, որ դա տեղի ունեցավ այն պատճառով, որ նա էր մուրաքիրին (ոստիկան, նաև դատական աստիճանավոր— Հ. Բ.) կանչողը»։

XIX գ. վերջում Դամարիոնայում ապրում էր հայտնի «Հայ Մանոլակին»։

Ինչ օտարականներ, գլխավորապես գաղթականներ կամ ուրիշներ տարբեր ժամանակներում եկան Նաքսոս, միշտ հյուրընկալության արժանացան և իրենց հերթին սիրեցին կղզին, որպես իրենց երկրորդ հայրենիքը։

Մեր մտադրությունն էր, որպեսզի բոլոր իրենց հայրենիքից արմատախիլ եղածներն արժանանան իրենց երազների իրականացմանը։

Ահա այսպիսի խոսքերով է ավարտում հոդվածը Ն. Կեֆալլինիադին։ Բնական է, հոդվածի իսկական հեղինակ Գ. Վարդիսը, այն գրել է փաստական նյութի հիման վրա, իր ձեռքին ունեցել է արխիվային փաստաթղթեր, որոնք վերահրատարակողը դժբախտաբար չի նշում։ Բոլոր դեպքերում հոդվածը մեզ համար որոշակի կարևորություն է ներկայացնում անգամ բանահյուսության առումով։